ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>>

Բեգլարյան ԲԿ տնօրեն՝ Ա.Գ.Բեգլարյան

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՐԾԻՔԸ

Աշոտ Արայի Դրամպյանի «Խոր ինֆիլտրատիվ էնդոմետրիոզի հետ զուգակցված անպտղության ախտորոշման և վարման նոր մոտեցումները» ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացվել է ԺԴ 00.01՝ «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Չնայած վերջին տարիներին անպտղության բուժման բնագավառում ձեռք բերված հաջողություններին, այնուամենայնիվ շարունակում են մնալ մեծաթիվ հարցեր,որոնք չունեն միանշանակ պատասխաններ: Դրանցից մեկը սեռական էնդոմետրիոզն է:

Ներկայումս գոյություն ունի էնդոմետրիոզի դեղորայքային բուժման լայն ընտրանի՝ համակցված էստրոգեն-գեստագենային հակաբեղմնավորիչներ,գեստագեններ, հակագոնադոտրոպիններ, հակագոնադոտրոպին ռիլիզինգ հորմոնի անալոգներ,արոմատազայի ինհիբիտորներ և այլն: Սակայն վերոնշյալ դեղորայքային պատրաստուկներից ոչ մեկը չի կարող ընտրողաբար քայքայել էնդոմետրիոիդային էկտոպիկ օջախները:

Էնդոմետրիոզի բուժման պահպանողական և վիրաբուժական մեթոդները հաճախ արդյունավետ են բուժառուների գանգատների մեղմացման առումով, սակայն դրանց ազդեցությունը պտղաբերության վրա վիճահարույց է, և առ այսօր էնդոմետրիոզով տառապող կանանց անպտղության օրինակելի բուժում գոյություն չունի:

Գրականության մեջ առկա չեն համակարգված տվյալներ պտղաբերության վրա խոր ինֆիլտրատիվ էնդոմետրիոզի ներգործության մասին: Այս առումով Ա.Ա. Դրամփյանի ատենախոսությունը ներկայացնում է գիտական և գործնական մեծ հետաքրքրություն:

Ատենախոսությունը կազմված է ավանդական ձևով և բաղկացած է ներածությունից, գրականության վերլուծական տեսությունից, հետազոտության նյութերի և մեթոդների նկարագրությունից կլինիկական խմբերի ընտրության հիմնավորումից, սեփական հետազոտությունների արդյունքներից, դրանց քննարկումից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից և գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի նպատակը և խնդիրները, քննարկվում են պաշտպանության համար

առաջադրված հիմնական դրույթները, աշխատանքի գիտական նորույթը և դրա գործնական նշանակությունը:

Դրված նպատակի մեջ հստակ ամրագրված է կապը պոստուլատների հետ,որոնցով հեղինակը հիմնավորում է հետազոտության արդիականությունը: Ներկայացված նյութի կլինիկական բնութագիրը և կիրառված մեթոդները հավաստում են, որ հետազոտությունն անցկացվել է մեծաթիվ դիտարկումների վրա՝ կիրառելով ժամանակակից մեթոդներ, որը թույլ է տալիս ստանալ հավաստի տվյալներ:

Հետազոտվել են 440 բուժառուների տվյալները, որոնց շրջանում իրականացվել է խոր ինֆիլտրատիվ էնդոմետրիոզի նվազագույն ինվազիվ վիրաբուժական բուժում: «Հետազոտության արդյունքները» գլխում առկա են նկարներ, որոնք հաստատում են նախկինում տնական ժամանակահատվածում չախտորոշված խոր ինֆիլտրատիվ էնդոմետրիոզի օջախների առկայությունը, մինչդեռ վերջիններս հանդիսացել են վերոնշյալ բուժառուների անպտղության պատճառը:

Հեղինակն առաջադրել է հետվիրահատական տարբերակված հորմոնային բուժման սխեմաներ, որոնք հետազոտության արդյունքների համաձայն շատ արդյունավետ են անպտղության բուժման մեջ: Սա հանդիսանում է միանգամայն նոր մոտեցում:

Հեղինակի կողմից մշակվել է ձվարանի էնդոմետրիոիդ կիստաների հեռացման օրգան պահպանող մեթոդը, որի շնորհիվ ձվարանային պահուստի նվազման ռիսկը հասցվել է նվազագույնի:

Ինչ վերաբերում է աշխատանքի գործնական արժեքին: Խոր ինֆիլտրատիվ էնդոմետրիոզի վաղ ախտորոշման՝ հեղինակի առաջարկած մոտեցումները հնարավորություն են տալիս զգալիորեն նվազեցնել «Անհայտ պատճառագիտության անպտղության» հաճախականությունը, որն իր հերթին թույլ է տալիս կանխել հիվանդության առաջընթացը և ծանրացումը, ինչպես նաև ձվարանային պահուստի հյուծումը:

Այնուամենայնիվ, հետազոտական աշխատանքի հետ կապված ունենք հետևյալ առաջարկը: Ատենախոսական աշխատանքում կիրառվել է AAGL դասակարգումը, մինչդեռ ցանկալի կլիներ օգտվել նաև ENZIAN և ASRM դասակարգումներից, որոնք փոխլրացնում են միմյանց և հնարավորություն են տալիս ստանալու էնդոմետրիոզի տարածման ամբողջական պատկերը:

Եզրակացություն: Գիտական դրույթները, եզրակացությունները և գործնական առաջարկները լավ հիմնավորված են և հիմված են կլինիկական նյութի մանրակրկիտ վերլուծության արդյունքների վրա: Աշխատանքի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ չկան: Ընդհանուր առմամբ թեմայի արդիականությունը, բարձր մեթոդական մակարդակը, ստացված տվյալների ծավալը, հետազոտության արդյունքների գիտական և գործնական նշանակությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Աշոտ Արայի Դրամպյանի «Խոր ինֆիլտրատիվ էնդոմետրիոզի հետ զուգակցված անպտղության ախտորոշման և վարման նոր մոտեցումները» ատենախոսական աշխատանքը, որը ներկայացվել է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական

աստիճանի հայցման համար, համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող Բարձրագույն Ատեստավորման Հանձնաժողովի «Գիտական աստիճաններ շնորհելու կարգի մասին» կանոնակարգի պահանջներին: Իսկ դրա հեղինակը արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը ԺԴ 00.01՝ «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է «Բեգլարյան ԲԿ» գիտական խորհրդի 2024 թ դեկտեմբերի 16-ի նիստում, որին ներկա էին գիտական խորհրդի նախագահ բ.գ.դ. պրոֆ. Ա.Գ.Հարությունյանը, (ԺԴ 00.01), բ.գ.թ. դոցենտ Ն.Բ.Շահվերդյանը (ԺԴ 00.01), բ.գ.թ. դոցենտ Ի.Հ.Կարապետյանը (ԺԴ 00.01), բ.գ.թ. դոցենտ Ի.Գ.Բեգլարյանը (ԺԴ 00.01), բ.գ.թ Ա.Գ.Հովհաննիսյանը (ԺԴ 00.01), բ.գ.թ. Ն.Լ.Դավթյանը (ԺԴ 00.01), բ.գ.թ. Գ.Ա.Ստեփանյանը (ԺԴ 00.01), բ.գ.թ. դոցենտ Մ.Է.Ավագյանը (ԺԴ 00.01), բ.գ.թ. դոցենտ Մ.Ա.Ոսկանյանը (ԺԴ 00.01):

Գիտ. խորհրդի նախագահ,

«Բեգլարյան ԲԿ» գիտության գծով խորհրդատու,

ԵՊԲՀ մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 1 ամբիոնի վարիչ,

բ.գ.դ. պրոֆ. Ա.Գ.Հարությունյան

Գիտ. խորհրդի քարտուղար,

ԵՊԲՀ մանկաբարձության և գինեկոլոգիայի թիբվ 1 ամբիոնի դոցենտ,

«Բեգլարյան ԲԿ» բուժ. գծով փոխտնօրեն՝ Ն.Բ.Շահվերդյան

Ա.Գ.Հարությունյանի և Ն.Բ.Շահվերդյանի ստորագրությունների իսկությունը հաստատում եմ ՝

Ս.Բաբայան

Բեգլարյան ԲԿ Կադրերի բաժնի պետ

Ստորագրություն և կնիք

16.12.2024թ.